ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆԵՐը։

Քաղաքական աշխարհը այս բոպէին, սկսած երկու ամսից ի վեր, այսպէս է բաժանուած՝ մի կողմից Գերմանիայի, Աւստրո-Ունգարիայի դաշնակցութիւնն է, որի մէջ է նաև Իտալիան, երկրորդ կողմից, սկսած Կրոնշտատի նաւային ցոյցերից՝ Ֆրանսիան է Ռուսիայի հետ, իբր հակակշիռ ոյժ եռապետեան դաշնակցութեան. երրորդ կողմից Անգլիան է, որը մի առանձին դիրք է բռնում, մի ձեռքով միացած Իտալիայի հետ, ընդդէմ Ֆրանսիայի, միւս ձեռքով եռապետեան դաշնակցութեան հետ, ընդդէմ Ռուսաստանի, բայց և այնպէս պահպանելով իւր ազատութիւնը, որպէս մի տէրութիւն, որը շահեր ունի երկրագնդիս բոլոր կէտերում թէ ցամաքների և թէ ծովերի վերայ։ Ֆրանսիայի և Ռուսաստանի բարեկամութեան պաշտօնական հաստատումը երկու ամսից ի վեր՝ ահա՛ ամենագլխաւոր իրողութիւնը, որ կատարւել է քաղաքական աշխարհում։ Մեր ընթերցողների համար մի նորութիւն չէ որ այդ բարեկամութիւնը արդէն տարիներով նախապատրաստում էր վերջին տարիներս ամէն կերպ՝ թէ մամուլի մէջ, թէ ընկերական յարաբերութիւնների մէջ, թէ քաղաքական յարաբերութիւնների մէջ։ Բայց այդ բոլորը իւր վերջնական սրբագործումը ընդունեց միայն Կրոնշտատում, Ֆրանսիական նաւային էսկադրի ընդունելութեան ժամանակ Ռուսաստանի կողմից։ Երբ Ֆրանսիական ազգային „Marseillaise“ հիմնը նւագելիս՝ ռուսաց թագաւոր կայսրը ոտի կանգնեց— դորանով պաշտօնապէս վերացաւ այն խուչընդոտը, որը ներքին քաղաքական պատճառներով խանգարում էր Ռուսաստանին այս քսան ու մէկ տարում՝ մերձենալ Ֆրանսիին։ Եւ պէտք է ասած, Գեր-

մանիան միշտ մեծ յոյսեր էր դնում, որ Ռուսաստանը երբէք հեռու չի տանիլ իւր բարեկամութիւնը հասարակապետական Ֆրանսիայի հետ, որպէս և. յոյսեր էր դնում թէ հասարակապետական Ֆրանսիան երբէք հեռուն չի տանիլ իւր բարեկամութիւնը միապետական-աուտոկրատական Ռուսաստանի հետ։ Այդ յոյսերը սխալ դուրս եկան, թէև անհիմն չէին։ Եւ իրօք, Ֆրանսիայի և Ռուսաստանի ներքին քաղաքական կազմակերպութեան մէջ եղած մեծ տարբերութիւնն էր պատճառը, որ նոցա մէջ ամբողջ քսան ու մէկ տարի չէր կարողացել կայանալ մի ամուր դաշնակցութիւն, չը նայած որ աւելի քան մի անգամ նոքա իրար ընկեր են ճանաչել ընդհանուր հակառակորդի՝ Գերմանիայի դէմ։ Մենք կը յիշենք մեր ընթերցողներին միայն երկու նշանաւոր դէպքեր անցեալից։ 1875 թուականին Գերմանիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները այնպէս լարուեցին, որ կարծում էին թէ Գերմանիան նորից պատրաստւում էր պատերազմ յայտնել Ֆրանսիային։ Բայց ճիշդ է թէ ոչ՝ թէ իբր Բիսմարկը սպառնացել էր մի նոր պատերազմով (մենք տրամադիր ենք կարծելու որ այդ սպառնալիքը լուրջ չէր), բայց միանգամայն հաստատ է, որ այդ ժամանակ Ռուսաստանը, իշխան Գորչակովի՝ իբր արտաքին գործերի այն ժամանակւայ մինիստրի բերանով հարկ համարեց յայտնել Գերմանիային, որ ինքը, Ռուսաստանը, մի երկրորդ պատերազմ Ֆրանսիայի դէմ թոյլ չի տալ և որ նա ստիպւած կը լինի միջամտել յօգուտ Ֆրանսիայի։

Մի երկրորդ դէպք պատահեց 1879 թուականին, Բերլինի կոնգրէսից մի տարի յետոյ, որից, որպէս ամենքին յայտնի է, Ռուսաստանը վերին աստիճանի տժգոհ դուրս եկաւ այն մեծ փոփոխութիւնների համար, որոնց այդ կոնգրէսում ենթարկւեց ռուս-թիւրքական Սան-Ստեֆանոյի հաշտութեան դաշնը։ Իսկապէս այդ կոնգրէսից յետոյ է սկսւում լարւածութիւնը Ռուսաստանի և Գերմանիայի քաղաքական յարաբերութիւնների մէջ, և իշխան Գորչակովը, այժմեայ արտաքին գործերի մինիստր պ. Գիրսի նախորդը, Գերմանիայի Վիսբադէն քաղաքում եղած ժամանակ, ֆրանսիական Soleil լրագրի խմբագիր պ. Հերւէին ասաց այս խորհրդաւոր խօսքերը՝ Soyez fort, այսինքն դուք Ֆրանսիացիներդ՝ եղէք ուժեղ! Իշխան Գորչակովի այդ խօսքերը, որոնք իւր ժամանակին ամբողջ աշխարհի լրագիր-

ներում պտոյտ արեցին և որոնց յիշատակը տարիներով չը ջնջուեց, առաջին մեծ յայտարարութիւնն էր Ռուսաստանի պատրաստականութեան՝ Ֆրանսիայի հետ միաբանութիւն հաստատելու՝ քաղաքական գալիք փոփոխութիւնների համար։

Զը նայելով այդքան բացարձակ յայտարարութիւնների յօգուտ Ֆրանսիայի և ընդդէմ Գերմանիայի, Գերմանիան սակայն, կայսր Վիլհելմ I և իշխան Բիսմարկի ժամանակ, հակառակ Գորչակովի տրամադրութիւններին, այնքան գրաւեց հանգուցեալ կայսր Ալեքսանդր II-ին, որ նոյն իսկ կարելի եղաւ Ռուսաստանը մոցնել այսպէս կոչուած երեք-կայսերական միաբանութեան մէջ, բաղկացած Գերմանիայից, Աւստրիայից և Ռուսաստանից։ Այդ նշանակում էր փորձ փորձել հաշտացնել Ռուսաստանը Աւստրիա-Ունգարիայի հետ, որովհետև Ռուսաստանի ձգտումները դարձրած են դէպի Բալկանեան թերակղզին, այսինքն այնտեղ, ուր Աւստրիա-Ունգարիան է ձգտում գերակշիռ նշանակութիւն ունենալ։ Բայց անհաշտելին հաշտացնել անհնարին եղաւ, այնպէս որ հանգուցեալ Վիլհելմ I-ի և Ալեքսանդր II, որպէս նաև յետոյ ներկայ Ալեքսանդր III կայսրների հետ պայմանաւորուած տեսակցութիւնները՝ բարեկամութիւն հաստատելու համար՝ դրական հետևանքներ չունեցան, և Ռուսաստանը դուրս եկաւ երեք-կայսերական միաբանութիւնից, դեռ ևս ութսունական թուականների սկզբներում, երբ արդէն յայտնի եղաւ 1879 թուականին Գերմանիայի և Աւստրիա-Ունգարիայի մէջ գրաւորապէս կապած դաշնակցութեան նախ իմաստը, ապա և բնագիրը, որ յետոյ նաև յայտարարուեց ընդհանուր գիտութեան համար։ Ռուսաստանի հեռանալը տեղիք տուեց Գերմանիային և Աւստրիա-Ունգարիային իրանց մօտեցնել Իտալիային, որը ընդունեց առաջարկուած պայմանները և որի հետ միասին կազմեց այսպէս կոչուած երեքպետեան դաշնակցութիւնը, որը արդէն եօթներորդ տարին է որ գոյութիւն ունի և ներկայ տարեայ սկզբներում նորոգուեց կրկին վեց տարով։

Ինչ դրութիւն ստեղծուեց Ռուսաստանի համար այդ իրողութիւններով։ Այն, որ Ռուսաստանը տատանվեցաւ, որովհետև, որքան էլ նա ցանկանում էր մի դաշնակից գտնել, բառիս բուն նշանակութեամբ՝ նա այդպիսին չէր գտնում մեծ պետութիւնների մէջ։ Մի նոյնպիսի առանձնութեան մէջ էր գտնուում նաև Ֆրանսիան

դեռ և 1871 թուականից ի վեր, բայց այդ երկու մեծ պետութիւնների իրար ձեռք մեկնելու համար պակաս էին մի քանի կարևոր պայմաններ։ Նախ որ այդ երկիրներից մէկը հասարակապետական է, իսկ միւսը՝ մարմնացումն է զուտ միապետականութեան։ Արդ, մինչին Եւրոպայի, գլխաւորապէս Գերմանիայի և Աւստրիա-Ունգարիայի քաղաքական մամուլը, որպէս նաև իշխան Բիսմարկը միշտ կարողացել էին օգուտ քաղել այդ հանգամանքից և ազդել Ռուսաստանի վերայ, ցոյց տալով այն վտանգը որ կարող է սպառնալ միապետական Ռուսաստանին՝ մի հանրապետութեան բարեկամութիւնը։ Բայց այդ ինարիգան յաջողութիւն չէր կարող ունենալ, եթէ միայն Ֆրանսիայի ներքին քաղաքական դրութիւնը այնպէս չը լինէր, որ իրօք ամեն մարդու կարող էր մտածել տալ թէ ինչ է լինելու նորա նոյն իսկ ամենամօտ ապագան։ Այդ դրութիւնը այնպէս էր, որ չը նայած ակնյայտնի յառաջդիմութիւններին գրեթէ բոլոր ասպարէզներում, այնուամենայնիւ նա, այդ ներքին քաղաքական դրութիւնը, չէր թոյլ տալիս որ մի որ և իցէ մինիստրութիւն մի քանի տարի դիմանար և չէր թոյլ տալիս որ մի որ և իցէ կուսակցութիւն այնքան ոյժ զգար, որ ապագան իրանը համարէր։ Թէպէտ և ուշի ուշով Ֆրանսիական վերջին քսանամեայ տարեայ գործերին հետևած մարդիկ չէին կարող չը տեսնել, որ այդ մինիստրական շարունակ փոփոխութիւնների արտաքինի տակ մեծամեծ գործեր են կատարւում, բայց և այնպէս այդ չափազանց յաճախ փոփոխութիւնները վատ տպաւորութիւն էին անում և իմացնել էին տալիս այն ներքին քաղաքական—կուսակցական երկպառակութիւնները, որոնք ջլատում էին Ֆրանսիայի հասարակապետութեան ոյժերը և նսեմացնում Ֆրանսիական կառավարութեան պրեստիժը մանաւանդ օտարների և այն էլ՝ միապետական մինիստրութիւնների տեսողականութեանը սովոր ազգերի առաջ։

Ահա այն պատճառները, որոնք խանգարում էին Ռուսաստանին քաղաքական մօտ բարեկամութիւն հաստատել Ֆրանսիայի հետ, մանաւանդ որ ինքը Ֆրանսիան էլ ծանրակշիռ պատճառներ ունէր այդքան մօտ բարեկամութիւնը գոնէ առայժմ չուզենալու։ Բայց եռապետութեան ոյժի առաջ միայնակ մնալ անհնարին էր, պէտք էր Ֆրանսիայի և Ռուսաստանի մէջ եղած խորթ յարաբերութիւնները

հարթել և ապագայ դաշնակցութեան համար հող պատրաստել։ Այդ գործին ձեռք զարկեցին ոչ միայն երկու երկրի կառավարութիւնները, այլ և երկու ազգերը։ Բարեկամութեան ցանկութիւնը իրան զգացնել տուեց երկու ազգերի քաղաքական մամուլի մէջ. միւս կողմից ռուսաց բելլետրիստիկան սկսեց մուտք գործել Ֆրանսիա, ուր մինչև անգամ ռուսաց նշանաւոր վիպասանների հետ ծանօթութիւնը ոչ միայն գրական, այլ և քաղաքական մեծ անհրաժեշտութիւն համարեցին։ Անցեալ տարիները ինչ ֆուրոր էր անում այդ գրական շարժումը ամբողջ Եւրոպայում՝ այդ յայտնի է ամենքին. և որովհետև այդ շարժումը քաղաքական աստառ ունէր, դորանով բացատրւում է նաև այն չափազանց մեծ ոգևորութիւնը, որին հասան ֆրանսիացիք այդ առիթով։ Այդ ոգևորութիւնը սկսեց տարածուել առհասարակ ամեն բանի վերայ, ինչ ռուսական անուն է կրում, և այսպիսով սկսեց Ֆրանսիայում այն ինչ ռուսոֆիլութիւն են անուանում։

Զուգընթացաբար այդ քաղաքականութեան զարգանալու հետ՝ կատարւում էր Ֆրանսիայում մի ներքին քաղաքական շարժում՝ բուլանժական շարժումը, որը իւր հոսանքի մէջ միացրել էր ամեն կարգի էլեմենտներ՝ միապետականներ, հասարակապետական ծայրահեղներ, սոցիալիստական այլ և այլ խմբեր և այլն՝ ընդդէմ ֆրանսիական ներկայ կառավարչական սիստեմի։ Այդ վտանգաւոր և ոչինչ բարին չը խոստացող շարժման դէմ հասարակապետութեան մղած կռիւը վերջացաւ վերջինիս յաղթանակով։ Բայց այդ յաղթանակը ունեցաւ մեծ հետևանքներ. այն իրողութիւնը, որ ֆրանսիական հասարակապետութիւնը կարողացաւ բուլանժական փոթորիկից ողջ դուրս գալ և այն ոյժը, առանց որի անկարելի կը լինէր մի այդպիսի ահեղ դաւադրութիւն գետին տապալել—այդ բոլորը սկսեց ազդել թէ արտասահմանի վերայ և թէ մանաւանդ ֆրանսիական կուսակցութիւնների վերայ։ Համոզելով հասարակապետութեան կայուն բնաւորութեան մէջ՝ բազմաթիւ միապետականներ միացան հասարակապետութեան հետ, հաշուեց կառավարութեան հետ նաև Հռովմի պապը, թելադրելով կարդինալ Լաւիժերիին այն ճառը, որ մենք իւր ժամանակին յիշատակել ենք այս էջերում։ Այսպիսով այս վերջին տարիներում ֆրանսիական հասարակապետութիւնը, բոլո-

ելով իւր, ինչպէս ասում են՝ չափահասութեան տարեշրջանը, 21 տարեկան հասակը և յաղթանակով դուրս գալով անթիւ փոթորիկներից, ձեռք բերեց նաև մի հաստատուն և անվիճելի կառավարութեան բնաւորութիւն թէ իրանց ֆրանսիացիների և թէ արտաքսահմանի աչքում։ Այժմեայ պարլամենտի ընտրութիւններին բոլոր կասկածաւոր էլեմենտները ջարդ կրեցին, միջոց տալով ներկայ մինիստրութեան, որի գլուխն է Ֆրէյսինէ և որի միւս մեծ ոյժն է ներքին գործերի մինիստր Կոնստանը, այնքան ապրել, որքան չի ապրել ոչ մի ֆրանսիական մինիստրութիւն այս վերջին 21 տարում, այն է աւելի քան երկու տարի։

Մինչև որ Ֆրանսիայում կառավարութիւնը ամրանում էր և ռուսական դաշնակցութեան պրոպագանդան էր անում, Ռուսաստանը, այդ միջանցքում արգէն ձեռք էր բերել մի քանի մանր տէրութիւնների բարեկամութիւնը՝ Մոնտէնեգրոի, Սերբիայի և Յունաստանի։ Եւ երբ, այս տարի, եռապետեան դաշնակցութիւնը նորոգուեց, Անգլիան էլ շատ թէ քիչ մօտիկ դիրք բռնեց Իտալիայի մօտ առանձնապէս և եռապետեան դաշնակցութեան մօտ ընդհանրապէս,—արդէն ժամանակը եկած համարուեց որ Ֆրանսիան և Ռուսաստանը ամբողջ աշխարհի համար տեսանելի ձևով իրար բարեկամութիւնը կամ դաշնակցութիւնը յայտարարեն։ Եւ այդ կատարուեց Կրոնշտատի նաւային ցոյցերով, ցոյցերով, որոնց կարապետն էր ներկայ թուականի ֆրանսիական արդիւնահանդէսը Մոսկուայում, որ տևեց մինչև ներկայ հոկտեմբերի սկիզբները։ Եւ չը նայած որ ֆրանսիական նաւային էսկադրը իւր վերադարձին այցելեց Անգլիայի Պորտսմուտ պատերազմական նաւահանգիստը և չը նայած որ անգլիական կառավարութիւնը չը տեսնուած շքով և պատուով ընդունեց և ողջունեց ֆրանսիացիների էսկադրին ու սորա գլուխ վիցէ-ադմիրալ Ժերուէին,—բայց Կրոնշտատում ու Պետերբուրգում կատարուած ցոյցերից անգլիացիք չը կարողացան իմանալ նոցա քաղաքական բարձր նշանակութիւնը։ Թէ արդեօք Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կայացած է դաշնակցական որևէ գրաւոր պայման, ստորագրուած երկու կողմերի ներկայացուցիչներից,—այդ հարցին մենք մեր ընթերցողներին առ այժմ չենք կարող դրական պատասխան տալ. բայց եթէ մեր զգացմունքին ապաւինենք՝ մենք հաւանական ենք գտնում, որ դաշնակցութիւնը Ֆրան-

սիայի և Ռուսիայի միջև գրաւոր դոկումենտի ձև ստացած լինի դեռ. և սոխ-Ծովապետ Ժերեէի այցելութեան ժամանակ Ռուսաստանի մայրաքաղաքին։

Այսպէս կամ այնպէս, բայց Ֆրանսիական մինիստրների յաճախակի կրկնուած ճաւերը մեծ վստահութիւն են ներշնչում և ռազմական բարեկամութեան մասին այնպէս են խօսում, որ ենթադրել են տալիս ստորագրուած պայմանագրութիւն։

Ի վերջոյ և մի բնաորոշ իրողութիւն։ Ամբողջ քսանումէկ տարի Ֆրանսիան, իւր ատելութիւնը դէպի Գերմանիան տարածում էր նաև այս երկրի նոյն իսկ գեղարուեստի և երաժշտութեան վերայ։ Ռիխարդ Վագնէրը, նորագոյն Գերմանիայի այս հսկայ կոմպոզիտորը, ամենից հալածուած անունն էր Ֆրանսիայում Բիսմարկի անունից յետոյ և գրեթէ սորա համահաւասար։ Նորա օպերաները, որոնք նոր դար բացեցին երաժշտութեան համար, այնպէս հալածուած էին Ֆրանսիայում, որ այդ երկրի մայրաքաղաք Պարիզը դեռ նոցա չէր տեսել. հազիւ հազ Ֆրանսիայի միւս քաղաքներում՝ Լիոն, Բորդօ, մի մի անգամ յաջողւել էր Վագնէրի օպերաները բեմի վերայ դնել, իսկ Պարիզում մինչ այս վերջին ժամանակներս այդ չէր յաջողւում՝ շովինիստ ամբոխը անողորմ էր այն աստիճան, որ երբ Պարիզի Էդէն թատրոնում դեռ. նոր ժամանակներս փորձեցին Լոհենգրին օպերան դնել, կատաղած ամբոխը արգելեց իւր աղմուկներով, այնպէս որ ներկայացումը չը կայացաւ և թատրոնական վարչութիւնը մեծ կարողութիւն կորցրեց այդ անաջողութեան պատճառով։

Բայց անկարելի համարւածը կարելի դառաւ, որովհետև նոր տոմարով սեպտեմբերի 16-ին Վագնէրի Լոհենգրին հռչակաւոր օպերան տրւեց ոչ միայն Պարիզում առհասարակ, այլ և Պարիզի գլխաւոր օպերային թատրոնում։

Այդ քաջագործութիւնը, որ կարողացաւ գլուխ բերել այդ օպերայի եռանգուտ վագնէրական կապելմէյստէր Լամուրեօ՝ն, հնարաւոր եղաւ միայն այն ժամանակ, երբ Ֆրանսիան բարեկամութիւն հաստատեց Ռուսաստանի հետ և դուրս եկաւ այն առանձնութիւնից, որի մէջ էր նա մինչ այս վերջին տարին։ Կարծես Ֆրանսիան դորանով ուզեց ասել Գերմանիային՝ այժմ ես բաւականաչափ հանդիսո եմ քո մուդիկան լսելու համար...

Իրլանդական ազգային կուսակցութեան պարագլուխ Պարնէլի մահը, որ հաղորդուեց «Մուրճ»-ի անցեալ համարում, տեղիք է տալիս մեզ ներկայացնել հայ հասարակութեան առջև իրլանդական խնդիրը, այնպէս ինչպէս աւանդել են դարերը։ Պարնէլի անունը կը յիշուի պատմութեան մէջ հաւասար Օ'Կոննէլի հետ. և Պարնէլի կենսագրութիւնը անելով մենք չենք կարծում կատարած լինել այն, ինչ հարկաւոր է իրլանդական խնդիրը պարզելու համար։ Դորան «Մուրճ»-ը իւր յետագայ համարներում կը նուիրի առանձին յօդուածներ՝ ինչպէս արժանի է որ այդ խնդիրը մեր ընթերցողներին լաւ պարզուած լինի։

Z.